

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ
ՄԱՐՏԻՆՈՍ ՕՊԱՎԻԱՅՈՒ «ԳԱՒԱԶԱՆԱԳՐՔԻ»
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՅՈՒ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայ պատմագիտությանը վաղուց ի վեր հայտնի է, որ XIII դարի լատին հեղինակ Մարտինոս Օպավիացու «Գաւաղանագրքի»¹ 1348—1351 թթ. Ավինիոնում ներսէս Պալիանենցի կատարած թարգմանության մեջ կան ծավալուն հայկական հավելումներ: Դրա համար առաջին հերթին պարտական ենք թարգմանչի առաջաբանին, որի վերջում ասված է. «Նայ և ի մտի եղեալ [է] իմ. զի որքան և կարացից և գտայց՝ զպատմութիւնսն հայկազեանցն և զհայրապետացն և զթագաւորացն Հայոց գրել իսկ՝ եթէ ի շարս գրոցն և եթէ ի վերջս նորա. [որպէս] և դիպեսցի, թէ կարացից գտանել»²: Հենց այս տողերը ելակետ ունենալով, հայագիտության երախտավորներ Մ. Զամչանը, Ղ. Ալիշանը և Բ. Կյուլենբրյանը «Գաւաղանագրքի» իրենց ծանոթ ձեռագրերում փնտրել, գտել և հրատարակել են առավել կարևոր համարած հայկական բովանդակություն ունեցող հիշատակությունները³: Վ. Հակոբյանը տշխատել է առանձնացնել բոլոր հայկական հաղորդումները և իր նկատածները տպագրել է «Ներսէս Պալիանցի ժամանակագրական հատվածները» խորագրով, ապա՝ դրան կցել նույն թարգմանության մեջ գտնվող հայ թագավորների և իշխանների համառոտ պատմություն-ցանկը⁴:

Բայց քանի որ մինչև օրս «Գաւաղանագրքը» և հատկապես երջանիկ պատահականությամբ պահպանված ու մեզ հասած թարգմանչի ինքնագիր ձեռագիրը⁵ հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել, ուստի և չի նկատվել, որ նույն Պալիանենցը չի բավարարվել իր թարգմանած բնագրով և աշխատել է լատիներեն այլազան աղբյուրներից արած քաղվածքներով լրացնել հարստացնել այն: Մինչդեռ այս հավելումների մեծ մասը, որ հիմնականում պարզվում է թարգմանչի ինքնագրում առկա սրբագրությունների (ջնջումների)⁶ շնորհիվ, սկզբունքային նշանակություն ունի և արժանի է առանձին ուսումնասիրության:

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 2038, էջ 1ր. հմտ. M. A. v. d. Oudenrijn. *Linguae Haicanae Scriptores...*, Bernae, 1960, p. 211.

² Տե՛ս Մ. Զամչանց. Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ջամ տևանու 1784... Տ. Գ. Վենետիկ, 1786, էջ 372—391: Ղ. Ալիշան. Հայապատմ. Պատմիչք և պատմութիւնք. Հայոց. Տ. Բ. Վենետիկ, 1901, էջ 521—524, 532—533: Բ. [Կիւլենբրյան]. Տուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց. Անթիլիաս, 1961, էջ 199—208.

³ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ. XIII—XVIII դդ.» Տ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 173—206 (այսուհետև՝ ՄԺ, Բ):

⁴ Վենետիկի Միսիթարյան մատենադարան, ձեռ. № 1578 (այսուհետև այս ձեռագրի վկայակոչումները կտրվին շարադրանքի մեջ):

⁵ Օգտագործում ենք բնագրի վերջին (քննական) հրատարակությունը. Martini Oppaviensis Chronicon pontificum et imperatorum. Ed. Ludewicus Wetland (*Monumenta Germaniae historica... Scriptorum*, T. XXII), Hannoverae, 1872. Վերահրատ. Stuttgart—New York, 1963, էջ 377—482 (այսուհետև Mart. համառոտմամբ և անհրաժեշտ էջահամարով այս հրատարակությունը կնշնք շարադրանքում):

⁶ Առանձին տառերից ու բառերից սկսած մինչև ծավալուն կտորների հստակ չեղումներն արված են գրեթե աչքովա խմբագրական-հրատարակական եղանակներով, ուստի և անպատճառաբանելի, հաճախ դժվարությամբ, մեծ մասամբ վերծանելի են:

Հավելումների մի խմբում⁷ հիմնականում նկարագրված են աղգադրական-աշխարհագրական «հրաշքներ»՝ բնության և շրջապատող աշխարհի երեվելություններ, որոնք անբացատրելի էին ժամանակի գիտական մտքի համար: Ժանրային առումով սրանք մի ուրույն ամբողջություն են կազմում և իբրև այդպիսիք առանձին հարցի նյութ են, ուստի բավարարվենք ասելով միայն հետևյալը. խորապես ազդվելով XIV դարի կեսերին Եվրոպայում իշխող պատմագրական և ընդհանրապես գրական նորամուծությունից, այդ բնագրերը Պալիանենցն իր թարգմանության մեջ է մուծել՝ քաղելով Ավինյոնի պապական արքունիքի բանալուր և լատինական գրավոր տարբեր աղբյուրներից:

Մարտինոսի երկում պապերի ժամանակագրության բաժինը սկսվում է ավետարանների և անվավեր գրքերի հիման վրա իբրև առաջին քահանայապետ ներկայացված Քրիստոսի կենսագրության համառոտմամբ (Mart. 408¹¹⁻⁴³): Հայերենը դրան ավելացնում է նաև Մարիամ աստվածածնի համառոտ վարքը. «Ասացեալք արդեալք զմարմնոյ ծննդէնէն Քրիստոսի՝ զկենցաղավարութենէն և զմահուանէն, նայ և զայլն ևս, պարտ է ապա և պատշաճ է զսրբուհոյ ծնողէն նորին ևս բացայայտել»⁸ (1578, էջ 43): Բայց Մարիամի սերունդը պարզաբանող առաջին իսկ նախադասությանը հետևում է 13 տողանոց մի հատվածի շնչում, իսկ սրան հաջորդում է փոխարենը դրված ճիշտ տարբերակ, որի մասին տեղեկացնում է և աջ լուսանցքում գրված թարգմանչի ծանոթությունը (նույն տեղում): Ձեռվածի հաղորդած թվերը փակագծում նշելով, ներկայացնենք այս տարբերակների համեմատության արդյունքը. ծնվելուց 3 տարի անց Մարիամն ընծայվեց տաճարին, 11 (9) տարի մնաց այնտեղ, կյանքի 14 (12)-րդ տարում հղացավ, իսկ 15 (շնչվածում պետք է լիներ 13, բայց նշված չէ) տարեկանում ծնեց Քրիստոսին, նրա հետ միաժամանակ ապրեց 33 տարի (առաջինն ավելացնում է ևս 3 ամիս), նրանից հետո Երուսաղեմում Հովհաննես ավետարանիչի տանն ապրեց 12 տարի և 60-ամյա հասակում մահացավ (վերջին երկու թիվն առաջին տարբերակում չկան): Ընդունելի համարած տարբերակը վերջանում է այսպես. «Բայց էպիֆան ՀԲ (72) ամ ասէ ապրիլ մօր տեառն, վասն զի դնէ ԻԴ (24) ամ ապրիլ նմա յետ համբարձմանն Քրիստոսի: Մական ոչ է փորձեալ ասացութիւնս. այս, այլ իբօգրիֆա է, որ թարգմանի՝ երկբայ» (1578, էջ 43)⁹:

Կարծում ենք, որ առաջին տարբերակի համար ունեցած աղբյուրի թվերն անհավաստի են թվացել Պալիանենցին, իսկ 13-ամյա Մարիամից Քրիստոսի ծնվելը՝ անհաճու: Այս աղբյուրի հեղինակը կարող է լինել երկրորդ տարբերակի վերջում հիշված էպիֆանը (Եպիֆան), բայց նրա և նրա անվավեր գրքի մասին որևէ տեղեկություն չենք գտել: Հայ թարգմանչի երկրորդ աղբյուրն էլ, անկասկած, եղել է առաջինի բնույթի՝ նման Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մեկում առկա անկանոն գրքերի ցանկում հիշատակված «Աստուածածնին պատմութիւն» գրվածքին¹⁰, իսկ այսպիսիք լատինական մատենագրության մեջ, անշուշտ, շատ են:

Առավել ուշագրավն այն է, որ անվավեր գրքերի իր փնտրտուքը Պալիանենցը կատարել է Մարտինոսի աղբյուրների հետքերով, սա էլ նույն անկա-

⁷ Մանր բնադրեր և խոշոր գործերի հատվածներ են. «Պատմութիւն Աղէկսանդրի մեծի», «Պատմութիւնք և անուանք ԻԲ (22) թագաւորացն», «Յաղագս սբանչեւացն աստուծոյ և պէսպէս հիանալի իրի, զոր գտանին ընդ *տիեզերս յայտնապէս», «Նորագոյն իրս և արմացք որ կայ յերկրի՝ մարդիք Պրակմանք անուն», «Դարձեալ և այլ հիանալի իրս և գոյացութիւնս աստուծոյ» (1578, էջ 28—38 և 277—278):

⁸ Պալիանենցին հատուկ այս ոճը սովորաբար գործածվում է բնագրից որևէ շեղում անելիս. «Կարտ վարկայ վերջոյ ինքնակալութեանն հոռմայեցեոցն և ղտէրութեանն լանդինացոցն զիշխութիւնէն և ղթագաւորութենէն Հայոց համառօտաբար շարագրել...» (1578, էջ 264):

⁹ Մնացած տարբերությունները քերականական-շարահասկան բնույթի են:

¹⁰ Տե՛ս «Հայկական մատենագիտություն. Ե—ԺԸ գդ.» հ. Ա, Երևան, 1959, էջ 908:

նոն գրքերից բաղել է Քրիստոսի մանկության դեպքերի շարադրանքը (տե՛ս Mart. 408, ծ. 83):

Հաջորդ, այս անգամ ավելի ծավալուն և կարևոր լատինական հավելումը, որ կատարել է հայ թարգմանիչը, վերաբերում է Վեսպասիանոս և Տիտոս կայսրերի կողմից հրեական ապստամբության ճնշման և, հատկապես, Երուսաղեմի պաշարման ու առման (մ. թ. 70 թ. գարուն—սեպտեմբեր) փաստին:

Վեսպասիանոսի վարքը (Mart. 445₁₄₋₂₀), հաղորդումների զգալի եռեմյակաճյուղամբ, ընդհանուր առմամբ ճիշտ է վերարտադրված (1578, էջ 54 և 56): Սրանից անմիջապես հետո կարմրով՝ իբրև մի տեսակ խորագրով, Պալիանենցն զգուշացնում է. «Այլ ուստեք[է]՝ արտաքոյ գրոցս այս ինչ», ապա՝ սկսում. «Էնդէպիոս պատմագիր Եբրայեցւոցն յիւրում Գրօնիքան, յախնքն է՝ ի Գաւազանաց գիրսն ասէ. «Զայսմանէ բոցոյս Յովսէպիոս գրողն Պատմութեանց, զօրագլուխ պատերազմին հրէից, յորժամ ի հռոմայեցւոցն սպանեալ լինէր, նախապատմեաց զմահուանէն ներոնի, ևս և զնորին անօրէնութեանցն» (1578, էջ 56): «Եբրայեցւոց պատմագիր էուզեպիոսը» Եվսեբիոս կեսարացին է, բերված նախադասությունն էլ վերցված է նրա «Ժամանակագրության» լատիներեն թարգմանությունից, իսկ հայ ոսկեդարյան թարգմանության մեջ այն այսպես է. «Փղաւիոս Յովսէպոս պատմագիր եղև զօրավար հրէից ի պատերազմին և իբրև մերձ ի սպանանելն էր ի հռոմայեցւոց, յառաջագոյն գուշակէ Վեսպասիանոսի զնհրոնի վախճանէ և զնորս Թաղաւորութենէ»¹¹:

Այնուհետև Պալիանենցը շարունակում է. «Ճէրոնիմոս ի դիքքն «Զայսծառ արանցն» անուանեալ ասէ վասն սորին Յովսէպոսիս. «Սա Յովսէպոս՝ Մաթէոսի որդի, ի յերուսաղէմ ի Վեսպիանոսէ ըմբռնեալ և ի Տիտոսէ նորին որդոյն թողեալ լինէր» (1578, էջ 56): Հերոնիմոս Ստրիդոնացու (330—419) հիշատակված երկն ունի մի քանի վերնագիր («De viris illustribus», «De scriptoris ecclesiasticis», «De auctoribus») և հավելված («De vitis apostolorum», «De duodecibus ad desiderium» կամ «De luminaribus Ecclesiae»)¹². Եվսեբն՝ մատենագիտական բնույթի գործ է: Եվ Պալիանենցը նրանից քաղել է Փլավիոսի գործերի մասին մատենագիտական մի ամփոփ տեղեկանք, որին հաջորդում է «Հնութիւնք հրէականք» երկի 18-րդ սրբի Քրիստոսին վերաբերող հետսամուտ տեղեկության մեջբերումը (1578, էջ 56):

Հետևում է թարգմանչի մյուս մուտք-խորագիրը. «Եւ վասն զի Երուսաղէմ ի սոցին երկու կայսերցս (Վեսպասիանոսից և Տիտոսից—Յ. Վ.) առաւ և գերեցաւ, ասասցուք և սակաւ ինչ վասն առմանն և աւիրմանն նորին» (1578, էջ 58, 60), որի ներքո թարգմանված է Հովսեպոսի «Յաղագս պատերազմին հրէից» գրքի Երուսաղեմի անկման նախանշանների մասին պատմող գլուխը¹³: Իսկ սրան հաջորդում է լուսանցում դրված նոր վերնագիր-ծանոթություն. «Վասն սղարմանն Երուսաղէմի», որի սկսվածքն ալսպիսին է. «Էճիֆոս ի հինգերորդ գիրս իւր գրէ զսղարման և զտառապանացն Երուսաղէմի քաղաքին սրբոյ և ասէ այսպէս...» (1578, էջ 60): Այսուհետև մուծումը (վերջանում է՝ 1578, էջ 72) դառնում է միատարր՝ նոր վերնագիր չունի: Այստեղ արդեն ոչ թե բառացի թարգմանությունամբ, այլ բնութագրի վերաշարադրանքով ներկայաց-

¹¹ «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ...», Ի հայերէն թարգմանութենէ... թարգմանեալ ի լատին բարբառ աշխատասիրութեամբ Տ. Մ. Աւդերեան... մասն Բ. Քրոնիկոն կանոնք, Վենետիկ. 1818, էջ 272:

¹² Տե՛ս A. Potthast. Bibliotheca Historica Medii Aevi. Wegweiser durch die Geschichtswerke des Europäischen Mittelalters bis 1500... Band. I. Berlin, 1896 S. 595—596 (այսուհետև՝ Potthast).

¹³ Տե՛ս «Պատմագիրք արարեալ Յովսէպոսի Եբրայեցւոյ Յաղագս պատերազմին հրէից ընդ հոսմայեցիո և աւերմանն Երուսաղէմի և տաճարին հնոյ. թարգմանեալ ի լատինացւոց բարբառոց... Ստեփաննոսի... Իլովացւոյ...». էջմիածին, 1787, էջ 428—431 (այսուհետև՝ Յովսէպոս Եբրայեցի): Հմմտ. Н. А. Мещерский. История иудейской войны Иосифа Флавия в древнерусском переводе. М.—Л., 1958, էջ 420—421:

յիւստ է աշխատանքը, ինչ Երուսաղեմի պաշարման և սովի մասին պատմվում է Փլավիոսի գործի համապատասխան գլուխներում¹⁴։

Պարզվում է, որ Պալիանենցի հավելումը, հիմնականում վերաշարադրանք լինելով հանդերձ, քաղված է նույն Եվսեբիոս Կեսարացու առաջադրած ծրագրով. դա երևում է թեկուզ միայն վերջինիս «Պատմութիւն եկեղեցւոյ» գործի համապատասխան գլուխների վերնագրերից. «Վասն վերջնոյ գերու-թեանն հրէից, որ եղև յետ Քրիստոսի», «Վասն սովոյն, զոր դէպ եղև հրէից կրել», «Վասն նշանացն, որ եղեն յառաջ քան զպատերազմն», «Վասն հովսէ-պոսի և վասն գրոցն, զոր եթող նա»¹⁵։ Նման են նույնիսկ պաշարման մասին պատմող հատվածների սկսվածքները¹⁶։ Միայն թե Եվսեբիոսը նյութերը վերց-րել է Հովսեպոսի գրքի հերթագայությամբ, իսկ Պալիանենցը կատարել է յորանց տրամաբանական վերադասավորում՝ նախ Հովսեպոսի և նրա գոր-ծերի, ապա Երուսաղեմի անկման և կանխագուշակությունների (Փլավիոսը և Կեսարացին սա ղնում են քաղաքի առման նկարագրությունից հետո), վեր-ջում՝ պաշարման և սովի մասին¹⁷։ Այս վերջին հատվածի վերաշարադրանքի ամենահատկանշական գիծը սկզբնաղբյուրի նկատմամբ մեր հեղինակի բա-ցահայտ ազատ վերաբերմունքն է։ Դժվար է գտնել մի նախադասություն և պնդել, թե դա Հովսեպոսի որևէ որոշակի նախադասության համարժեքն է. կարծես թղթին է հանձնել այն տպավորությունը, որ ստացել է հրեա պատ-մագրի գրքի ընթերցումից։ Պալիանենցը չի խորշել նաև իր աղբյուրի տեղե-կությունների միտումնավոր խեղաթյուրումներից։ Այսպես. Փլավիոսն առանց սրողելու նկարագրում է պաշարվածներին ընկճելու նպատակով հռոմեացի-ների գործած դաժանությունները¹⁸, իսկ Պալիանենցը հավատացնում է, թե Տիտոսը սիրով ընդունում և կերակրում էր բոլոր փախստական սովյալներին (1578, էջ 62 և 64)։ Ապստամբության ղեկավարներին չսպանելը ևս մեր թարգմանիչը պատճառաբանում է Տիտոսի գթասրտությամբ (1578, էջ 72), մինչդեռ Հովսեպոսն առանց թաքցնելու ասում է, որ նրանք պահվեցին և սպանվեցին հաղթարշավով Հռոմ մտնելու ժամանակ՝ ինչպես պահանջում էր սովորույթը¹⁹։ Վերջինս նաև պատմում է, որ Երուսաղեմի տաճարի թալանված սպասքը ապստամբության ճնշումից հետո դրվեց Վեսպասիանոսի Հռոմում կառուցած խաղաղության տաճարում։ Պալիանենցը ոչ միայն չի վերցրել դա, այլև Հովելի մարգարեության Հերոնիմոսի գրած նախադրության միջոցով Մարտինոսի վերցրած նույն տեղեկությունը (Mart. 445¹⁵⁻¹⁷) նախապես թարգ-մանելուց հետո ջնջել է (1578, էջ 56), որովհետև դա հայ ընթերցողի աչքին Հռոմի համար կարող էր վատ հնչել։ Ուշագրավ է նաև «Յաղագս կնոջն, որ վասն սովոյն զորդին իւր խորովեաց և եկեր» գլխի²⁰ Պալիանենցի վերադասա-դրումը (1578, էջ 66 և 68)։ Հովսեպոսն աշխատել է հնարավոր չափով գուսպ ներկայացնել այս սրտաճմլիկ պատմությունը, իսկ Պալիանենցը՝ ընդհակա-ռակը, ամեն կերպ ավելի զգայացունց դարձնել այն։ Խորովված մսի հոտով եկած սովյալներին կնոջ տված պատասխանն ընդարձակված և մի ողբեր-

14 Հմմտ. Յովսէպոս Եբրայեցի, էջ 337, 374—385, 391—398, 418—419։

15 Տե՛ս և հմմտ. «Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», յեղեալ յատուրոյն ի հայ ի։ Հինգերորդ դարու. պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն հ. Աբրահամ վ. Ժարեան ի Մխիթարեանց, ի Վենետիկ, 1877, էջ 152—165, 168—173։

16 Նույն տեղում, էջ 155. հմմտ 1578, էջ 60։

17 Բնագրական համեմատությունը պարզում է, որ Պալիանենցի ձեռքին եղել են Եվսե-բիոսի երկերի Հերոնիմոս Ստրիդոնացու լատիներեն փոխադրությունները։ Այս մասում չը-լարգանված բառեր զրեթե չկան, որ հատուկ չէ Պալիանենցին, բայց դա բացատրվում է վե-րաշարադրանքի ընտրված եղանակով։

18 Տե՛ս Յովսէպոս Եբրայեցի, էջ 385—386։

19 Նույն տեղում, էջ 460։

20 Նույն տեղում, էջ 419—420։

գական մենախոսություն է վերածված, նույնպիսի մի այլ մենախոսություն այս առիթով դրված է և Տիտոսի բերանում:

Սկզբնաղբյուրի տեղեկությունների այս վերագասավորության, վերաշարադրանքի, վերամշակման և խեղաթյուրումների շնորհիվ հայ թարգմանիչը կարողացել է ասելիքն ավելի կուռ, աստիճանաբար զարգացող և հանգուցալուծվող՝ ավելի ընթերցվող և ընթերցողի վրա ներգործող դարձնել, որով և հասել է իր հետապնդած հիմնական նպատակին. գրեթե չկասկածելու շափ հավատացրել է ընթերցողներին, որ Երուսաղեմի անկումն ու ավերումը Քրիստոսին խաչելու դիմաց աստծու վրեժխնդրության արդյունքն էր, իսկ հոռմեացի զորավարներն ու նրանց զորքն այն նույն աստծու ակամա կամակատարներն էին: Այս հանդամանքն ավելի շեշտելու համար Պալիանենցն ստիպված է եղել դիմել XI—XII դդ. ֆրանսիացի ժամանակագիր Հուգո Ֆլերցուն (Hugo Floriacensis). «Հուգոս Ֆլորենցիանէսն ասէ. «Իբրև ձանձրացան հոռմայեցիքն և լքան ևս ի սպանանելոյ զհրէայսն, խնդրէին ապա եթէ ո՞ւմ արդեալ զգերիսն ծախեսցեն և ոչ գտանէին, վասն զի վաճառողք բազումք էին և գնողք՝ սակաւ և կամ ոչ մի: Լինէր ապա այնուհետև, զի երեսուն հրէայ դանկի միոջ, որ է միոյ տէնարի և կամ միոյ դրամի վաճառէին. ձայնէին և ոչ ոք ևս գնէր» (1578, էջ 72): Մի փոքր անց նույն մատենագրից բերում է մի այլ քաղում. «Գրի, եթէ ձև (130000) ծախուեցան երեսուն ի մի դանկի. և այս վասն այնմ, զի ինքեանք զՔրիստոս յերեսուն դանկ ծախեցին»: Ասվածն առավել բան անսքող է, ուստի սոսկ հետագայում հնարված «մեկին երեսուն» և «երեսունին մեկ» հակադրությունը ցույց տալու համար Պալիանենցը հարկ է համարել դիմել Հուգո Ֆլերցու «եկեղեցական պատմությանը»²¹:

Այսպիսով, հրեական ապստամբության մասին իր ընդարձակ հավելման համար ներսես Պալիանենցը հմտորեն և յուրատեսակ սկզբունքով օգտագործել է Եվսեբիոս Կեսարացու, Հերոնիմոս Ստրիդոնացու²², Հովսեպոս Փլավիոսի և Հուգո Ֆլերցու աշխատությունները:

Հայերեն Մարտիրոսի լատինական մուծումների մի մեծ խմբի աղբյուրը կաթոլիկ եկեղեցու և նրա ժողովների ու պապերի որոշումների (կանոնների) գիրքն է՝ «Գիրք Տէրէթացը» (Liber Decretalium), որին Պալիանենցը դիմել է գրեթե բոլոր այն դէպքերում, երբ պապերի բաժնի որևէ վարքում կարողացել է, թե այդ պապի օրոք եկեղեցական ժողով է եղել կամ նա որևէ նոր կանոն է սահմանել:

Այսպիսի մի ժողովի մասին պատմվում է Ադրիանոս I պապի (772—795) փառքում. այստեղ Կառլոս Մեծը Հռոմի եկեղեցուն իրավունք տվեց առանց կոյսեր հավանության պապ ընտրել, իսկ պապը նրան օծեց Հռոմի կայսր (Mart. 426³⁷⁻⁴⁶): Հայերենում սյան հետևում է մի շարադրանք, որի համարժեքը լուսնի նաև լատիներենի Կառլոս Մեծի վարքը (Mart. 461³⁹⁻⁴⁶²⁹). «Ի յոր ժողով պապն լիակատար իշխանութեամբն, զոր ունէրն տուեալ ի Կոստանդիանոսէ և յայլ բարեպաշտից ինքնակալաց, և հաւանութեամբ ժողովոյն, զայն, զոր նախնին իւր Ստեփաննոս պապն երկրորդն ի վերջին ամին իւրոյ քահանայապետութեանն էր կարգել և տուել, սա Ադրիանոս ի ժողովս յայս ընդարձակապէս շնորհեաց և ես Գառլոսին՝ զինքնակալութիւնն Հռոմայեցոցն և գտէրութիւնն...» (1578, էջ 149): Ասյա բավական երկարորեն պատմում է կայսրությունը գերմանացիներին փոխանցվելու երևույթի պատճառների ու հանգամանքների մասին: Բարեբախտաբար այստեղ կա նաև աղբյուրի

²¹ Այս հեղինակի երկերի մատենագիտությունը տե՛ս Pottthast, I, էջ 626—627. Նրա «եկեղեցական պատմություն» (Historia Ecclesiastica) մեր սենեցած հրատարակությունը՝ Hagnonis Floriacensis Opera Historica: accedunt aliae francorum Historiae. Ed. Georgio Waitz (Monumenta Germaniae Historica... Scriptorum. t. IX, Hannoverae, 1851, p. 337—406), հատվածական է և հին շրջանի պատմությունը չի բնագրել (տե՛ս նույն տեղում, էջ 349—364):

²² Հովսեպոսի երկերի մասին տեղեկանքը կարող էր վերցնել նաև Եվսեբիոսից, բայց գերազանց է դիմել այս հարցում ավելի հեղինակավոր Հերոնիմոսին:

մատնանշումը. «Զորոյ զեղանակ փոփոխման ինքնակալութեանն և զտալն Կառլոսիս երեցուցանէ ի գիրքն Տէքրէթագ», իսկ սրան հաջորդում է ջնջված երկու տող՝ «ի հինկերորդ գիրքն, ի յերկայնաձգութիւնն, աշխէքն է՝ ի ճառն, որ սկսանի. «Ոչ առականագոյն» (1578, էջ 149): Զնջված լինելը կարող է բացատրվել միայն այսպէս. Պալիանենցն իր հավելման աղբյուրը նախապէս ծանոթագրել է ամենայն մանրամասնութեամբ, ապա վերջին մանրամասներն ավելորդ է համարել և ջնջել: Նման բացատրության օգտին խոսում է և հավելման վերջում դրված երկրորդ հղումը. «Որպէս ցուցանի ի գիրս Տէքրէթագրացն» (նույն տեղում), որտեղ արդեն վերոբերյալ մանրամասները չկան:

Նույնպիսի մի մուծում էլ կա Աղբիւսնոս II-ի (867—872) վարքում. «Վասըն որոյ և սոյն Աղբիւսնոս պապ գրէ ի գիրս Տէգրէթին՝ ԿԳ (63) գլուխն, ի տրամաբանութիւնն ԱԺ (11)-ն այսպէս. «Լօղորդիկոս բարձրահանկէտ իշխանն զանարժանապէս ճաշակմանն աստուածաին սուրբ խորհրդոյն՝ ի յօրն վերջին կենցաղոյ զդատաստանն անձին իւրոյ ծանեալ»: Իսկ սրան հաջորդող մյուս ջնջումն ավելի ուշագործ և արժեքավոր է. «Նա ևս ի սոյն պապէս այլ ևս վկայութիւնք կան դրեալ ի նոյն ևս գրոցն, այլ զի գիրքն այն ոչ է ի հայրմաս, ևս ի բաց թողում և ոչ գրեմ» (1578, էջ 159): Այս տողերն արդեն թույլ են տալիս վստահորեն եզրակացնել, որ և՛ այս, և՛ նախորդ հավելումների հեղինակը հենց Պալիանենցն է. նաև՝ որ նա հիանալի ծանոթ էր Liber Decretalium-ին և առանց որևէ կաշկանդվածության իր թարգմանության մեջ՝ նշելով կամ առանց նշելու, մուծել է բազմաթիվ այլ տեղեկություններ, որոնց զանազանումը հնարավոր է միայն բնագրի և թարգմանության մանրակրկիտ համեմատության շնորհիվ:

Նիկողայոս II պապի (1058—1061) վարքի մեջ նույն գրքից մուծված այն տեղեկությունը, թե Հռոմում ժողով հրավիրեց, որտեղ պապ ընտրելու կանոն սահմանեց («որպէս և ցուցանի ի գիրս Տէգրէթագրացն...», 1578, էջ 179) Պալիանենցը հետագայում քիչ է համարել, բայց քանի որ այս էջն ամբողջովին գրված էր, ուստի ժամանակակից Բերենգարիոս եպիսկոպոսի աղանդի մասին պատմող նոր ընդարձակ հավելումը գրանցել է նույն էջի ստորին լուսանցում և երկու անգամ ծանոթագրել. «որպէս ասի ի Տէքրէթն» և «որպէս և ի Տէքրէթն գրի զնմանէ» (1578, էջ 179): Այստեղ աչքի է ընկնում նաև Պալիանենց թարգմանչի մի այլ ձգտումը՝ ընդարձակել բոլոր այն վարքերը, որ Մարտինոսի բնագրում շատ համառոտ են: Այս դեպքում, օրինակ, Նիկողայոս II-ի գահակալման առաջին տարվա և իշխանության տևողության սովորական հիշատակումից բացի ստում է, որ Ֆլորենցիայի եպիսկոպոսութեանից պապ ընտրվեց, Հռոմում ժողով հրավիրեց, մահացավ (Mart. 434⁸⁻¹⁰): Նույն եղանակով ընդարձակված է նաև 903 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իշխած Լևոն V պապի գերհամառոտ վարքը (Mart. 428¹⁷⁻¹⁹): Այս դեպքում արդեն Պալիանենցի աղբյուրը լատին եկեղեցու Պատարագամատուցն է (Missale). «Որպէս գրի ի գիրս Պատարագացն» (1578, էջ 157): Ընդհանրապէս այսպիսի 1—2 տողանոց վարքեր Մարտինոսը շատ ունի և Պալիանենցը գրեթե միշտ աշխատում է դրանք ընդարձակել:

Հայերենում շատ հետաքրքիր է և Ուրբանոս II-ի (1088—1099) վարքը. լատիներենում այստեղ հիշատակվում են Կլեմոնի և Տուրի ժողովները, ապա ասվում է, որ խաչակիրները գրավեցին Անտիոքը, Տրիպոլին, Աքքան և Երուսաղեմը (Mart. 435³⁻⁸): Նույն դեպքերի առավել մանրամասն այն շարադրանքը, որ լատիներենում դրված է Հենրիկոս III կայսեր (1056—1106) վարքում (Mart. 468¹²⁻³⁵), հայերենում տրված է Ուրբանոս II-ի վարքում (տե՛ս 1578, էջ 183, 185, 187), բայց Պալիանենցը դա ևս քիչ է համարել և եղածը լրացրել է բազմաթիվ այլ մանրամասներով, որոնք կրկին ծանոթագրված են՝ «Որպէս ընդարձակ պատմի ի գիրս Տէքրէթագրացն՝ ի ճառն Ռոմկաց, որ է ալբանացն». հետևում են ջնջված մանրամասները. «ի գլուխն որ սկսանի. «Եպիսկոպոս կամ աբաս»: Եւ դարձեալ ի գլուխն որ ասէ. «Թէպէտ եպիսկոպոս կամ աբաս ի ներքոյ կամ կերպի»: Եւ դարձեալ ի գլուխն որ ասէ. «Յոր ինչ կերպ ապրանք, որ անկանի յեկեղեցիս» և այլն (1578, էջ 183):

Մարտինոսի աղբյուրների շարքում ևս հիշատակված է՝ «ex Decreto»․ այս բնույթի նյութերի նրա բոլոր օգտագործումների տարբեր աղբյուրներ ունենալը պարզել և նշել է Լ. Վելյանդը (Mart. 392)։ «Տեքրէթաց» գրքի Պալիանենցի վերոբերյալ հիշատակումներից ելնելով պետք է մտածել, որ նրա օգտագործածը եղել է մի ընդարձակ, մի քանի մասից բաղկացած և համապարփակ ժողովածու։ Կարելի էր մտածել, որ դա նույն Մարտինոսի հեղինակած «Tabulae Decreti et Decretalium» գործն է (տե՛ս Mart. 379—380), բայց Պալիանենցի ժողովածուի ընդարձակության մասին մեր ունեցած պատկերացումը չի համապատասխանում սրա բառարանային համառոտ բնույթին։ Բոլոր դեպքերում միջնադարյան լատինական եկեղեցու ժողովներին վերաբերող հարուստ մատենագրության և նրան վերաբերող ընդարձակ գրականության մեջ Պալիանենցի ձեռքին եղած ժողովածուն պարզելը բարդ խնդիր է, ուստի և՛ ապագայի հարց։

Ուշագրավ տեղեկություն է տալիս և Ալեքսանդր III պապի (1159—1181) վարքի հայերենի ունեցած մի հավելումը․ Ֆրիդրիխ Գիկամորուսի կողմից հավածված այս պապը փախել էր Ֆրանսիա, այնտեղից՝ Մեսսանա, որտեղից էլ «փոխէր զինքն ի կերպ լոկ քահանայի և ի վնէժ փախչէր» (1578, էջ 199)։ Ինքնագրի այս էջը XVIII դարի շղագրով նորոգված է և շարադրանքը շարունակվում է առանց որևէ ծանոթության։ Բայց, բարեբախտաբար, հետագա ընդօրինակություններից մի քանիսն այս տեղում պահպանել են մի արժեքավոր պարզաբանում, որը Պալիանենցի ինքնագրում երևի թույլ ջնջված է եղել․ «Իսկ զվնէժոյ բանս ի գիրս ոչ գտանեմ, այլ՝ յաւանդութենէ լուեալս»²³։ Ուրեմն, եթե պապի Վենետիկ գնալու, այնտեղ շարունակված երկարութեամբ պայքարի և կայացած հաշտության մասին մանրամասն շարադրանքը Պալիանենցը գրել է «յաւանդութենէ լուեալ», չպետք է կասկածել, որ նույն պապի վարքի լատիններենում բացակայող (Mart. 437₁₋₂₄) մյուս հաղորդումները ևս վերցված են այլ աղբյուրներից²⁵։

Թարգմանության և բնագրի հարաբերակցությունը պատկերացնելու առումով ուշագրավ արդյունք է տալիս առանձին վարքերի ամբողջական համեմատությունը։ Ներկայացնենք այդպիսի միայն մի օրինակ․ Դամասոս I պապի (366—384) կենսագրության լատիններենի (Mart. 416₄₆—417₁₄) նախադասությունները համարակալել ենք՝ 1—17։ Հայերենում (1578, էջ 89, 91, 93) դրանք ունեն բոլորովին այլ հերթագայություն՝ 1—3, 5, 13, 6, 15—17, 11—12, 4, 8—10, 7․ Իսկ 14-րդը վրիպել է և չի թարգմանվել։ Այս վերադասավորումը թարգմանչի լատիններեն հիմքից չի բխում, որովհետև բաղմամբիվ ուրիշ տեղերում երևում է, որ վերադասավորողը Պալիանենցն է (տե՛ս, օրինակ, 1578, էջ 42)։ Շատ տեղերում թարգմանությունն ազատ-մեկնողական է և որոշ լրացուցիչ տեղեկություններ ցույց են տալիս, որ թարգմանիչը քաջատեղյակ էր լատին մատենագրությանը։ Այսպես՝ ժամանակի այլ սրբերի և երևելի հայրերի շարքում բնագրում նշված է նաև Մարտինոս Տուրոնցու (336—401) անունը, իսկ Պալիանենցը, որ, անշուշտ, պետք է ծանոթ լիներ նրա հայտնավորքային ողբէ վարքի, նրա մասին հյուսել է երկու տողանոց մի ներբող, իսկ վերջում ավելացրել, որ սա զործել է Գալիլայում։ Նա ծանոթ էր նաև հենց Դամասոս I-ի նմանաբնույթ մի այլ վարքի, որովհետև հակադրվելով լատիններենի այն հաղորդմանը, թե նա թաղվել է Ս․ Պետրոսի եկեղեցում, ասում է․ «Թաղեցաւ յեկեղեցին իւր, զոր ինքն էր շինեալ ի ճանապարհն Արտէացինոյ» և անմիջապես ծանոթագրում՝ «որպէս ասէ և պատմութիւն նո-

²³ St'us Repertorium fontium Historiae Medii Aevi... T. III, Fontes C, Romae, MCMLXX (1970), pp. 528—603, Concilia բառահոլովածը։

²⁴ ՄՄ, ձև. № 2038, էջ 157ա, № 4347, էջ 155ա, 156ա, № 3079, էջ 153ա։ Նրուսահմի Ս․ Հակոբյանց մատենադարան, ձև. № 995, էջ 321։ Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձև. № 626, էջ 165ա, 166ա։

²⁵ Հմմտ. ՄՄ, ձև. № 2038, էջ 156ա, 157ա, 158ա, 159ա, 160ա։

րա» (1578, էջ 91): Այստեղ կա նույնաբնույթ մի այլ, ավելի ընդարձակ հավելում՝ Հերոնիմոս Ստրիդոնացու համառոտ վարքը, ուր շեշտը դրված է նրա մատենագրական գործունեության բացահայտման վրա. սրա համար ևս ծանոթագրված է՝ «որպէս գրի ի պատմութիւնն իւր» (1578, էջ 93): Հիշարժան է, որ այլ աղբյուրից քաղված այս վարքը գրելուց և էջն ամբողջովին լրացրած լինելուց հետո է միայն Պալիանենցը նկատել, որ Հերոնիմոսի դրական վաստակի մասին Մարտինոսի ունեցած միակ տեղեկությունը (Սաղմոսարանի թարգմանության խմբագրման մասին) վրիպել է իր ուշադրությունից. ուստի ստիպված է եղել դրա թարգմանությունը գետեղել նույն էջի ստորին լուսանցում (1578, էջ 93):

Ավելացնենք, որ հայերենի մեջ հիմնովին վերամշակված կենսագրությունները մեծամասնություն են կազմում՝ քիչ է այն վարքերի քանակը, ուր Պալիանենցն ավելացնելիք չի ունեցել և ճշգրիտ վերարտադրել է:

Առսոնձին բարդության հետ է կապված և՛ կայսրերի, և՛ պապերի ժամանակագրությունների ավարտի (համապատասխանաբար՝ 1270—1340 թթ. և 1278—1342 թ. ժամանակահատվածների) մասի լատինական հավելումների պարզումը: Այս այն տեղն է, ուր ավարտվում է Մարտինոսի հեղինակային շարադրանքը և սկսվում են շարունակությունները, որոնց թիվն անչափ մեծ է: Մեզ ծանոթ մոտ երեք տասնյակ շարունակություններից²⁶ որևէ մեկը հայերենի ունեցածի հետ շփման եզր չունի: Այդ բոլորի համեմատ հայերենը բավական մանրամասն և հանգամանալից է. իսկ որևէ լատիներեն շարունակության հետ թվացյալ նմանությունը միայն նույն դեպքի մասին պատմելու հանգամանքի արտահայտությունն է:

Բայց այս մասում ևս թարգմանչի ինքնագիրը լի է ջնջումներով և դրանց զննատման համար ստիպված ենք դիմել աշխատության հեղինակային մասում ջնջված ծավալուն հատվածների բնույթին: Մինչև այժմ ներկայացված ջնջումները վերաբերում էին թարգմանչի հավելումներին. այսպիսիք կազմում են ինքնագրի բնեցածների ճնշող մեծամասնությունը: Կա սրբագրումների մի խումբ ևս. այստեղ ջնջվել են այնպիսի տողեր, որոնք թեև բխում են լատիներեն բնագրից, բայց թարգմանիչը չի ցանկացել դրանք հայ ընթերցողի սեփականությունը դարձնել, յրովհետև կարող էին Հռոմի և եվրոպացիների մասին վատ տպավորություն ստեղծել: Դրանցից մեկը՝ Երուսաղեմի տաճարի թալանված սպասքը Հռոմի խաղաղության տաճարում դնելու մասին, արդեն էլ թուլացել, որ եթե Գայուս Մարիուս կոնսուլի (107—100 թթ. մ. թ. ա.) ջանքերը չլինեին, Հռոմի անունն իսկ կվերանար երկրի երեսից (Mart. 40⁵⁵⁰⁻⁵²). Պալիանենցը դա թարգմանելուց հետո ջնջել է, որովհետև այստեղ ստիպված էր եղել գրել. «այնչափ նուազեաց քաղաքն Հռոմա, մինչ զի հազիւ Լրեւէր, եթէ կայ ի կայի» (1578, էջ 24) և այլն²⁷:

Մյուս կողմից, այս մասում քիչ չեն քաղաքական համակրությունների առումով լիովին անմեղ հաղորդումները, որոնք նույնպես հանվել են խմբագրելիս: Ներկայացնենք դրանցից մեկ-երկուսը:

Այսպես, 1282 թ. Պետրոս III Արագոնացու և Կառլոս Անժուցու ընդհարման հետևանքով Սիցիլիան անցավ Արագոնիային, բայց Կառլոսը հեշտությամբ չհաշտվեց կատարվածի հետ և հակառակորդները որոշեցին նույն

²⁶ Մի քանիսը տպագրվել են բնագրի հետ՝ Mart., 475—482. հետազայում մի այլ խումբ տպագրել է նույն հրատարակիչը՝ Monumenta Germaniae Historica, Scriptorum, t. XXIV, Hannoverae, 1879, pp. 251—265, մի այլ խումբ՝ Օ. Հոլդեր-Էդդերը՝ նույն շարքում, T. XXX, pars I, Hannoverae, 1896, pp. 708—720. Մյուսները նշված են՝ Pott-hast, I, էջ 771—772 և Polski Słownik Biograficzny, T. XIX, Wrocław, 1974, s. 561:

²⁷ Նույնաբնույթ ջնջումներ տե՛ս նաև՝ 1578, էջ 153, 242 և այլն:

տարվա հունիսի 1-ին հարյուրական զինվորով հանդիպել ու մենամարտել «ի դաշտն Պուրտէկալիոյ, որ է Պուրտէլ քաղաքն Կատկոնաց»։ Հանդիպումը չկայացավ. դրա պատճառաբանությունների զգալի մասը Պալիանենցը ջրնէն է (1578, էջ 230)։ Կովոզ երկու կողմն էլ հավասարապես սիրելի էին միարար թարգմանչի համար, ուստի, երեւի, ջնջումը պետք է համարել աղբյուրի նկատմամբ առաջացած կասկածի արտահայտություն։

Նույնպիսի անմեղ հաղորդում է և 1302 թ. Ֆրանսիայի դեմ ֆլամանդացիների ապստամբությունն և հատկապես Կուրտյէի մոտ տեղի ունեցած նշանավոր «խթանների ճակատամարտի» նկարագրությունը, ուր ջնջված է ֆլամանդացիների հիմնական զենքի՝ կոտնտախի (goedendag—խուդենդախ) բնորոշական նկարագրությունը, փոխարենը առաջարկված է համառոտ և քիչ պատկերավոր մի այլ նկարագրություն (1578, էջ 238)։ Եթե ջնջվածը մեր թարգմանչի մեկնություն-բացատրությունը չէ, ապա միայն այն հանգամանքը, որ նա համառոտել է բնագրի տվածը, մեզ թույլ կտա հաղորդման ետևում տեսնել Պալիանենցի ունեցած Մարտինոսից տարբեր մի այլ աղբյուր։

Մի ուրիշ հետաքրքիր հատված. Աքայի 1291 թ. անկման հաղորդումն ավարտվում է երկու տողի ջնջումով. «Ֆուանկնին այնցեղ խեւ տոէլնի»²⁸ են, որ ու թէ՛ զայս, այլ ամենայն Սուրբ Աշխարհն և զամենայն իւրեանց տեղիս՝ ուր և է, իւրեանց խեւութեամբն և անիրավելովն կորուսին և կորսնեն իսկս (1578, էջ 237)։ Սրան նախորդող տողերում ևս նույն ֆրանկները վատաբանվում են իրար չօգնելու, նախանձոտության և այլ արատների համար, բայց պապներ և ֆրանկասեր թարգմանիչն իր վրդովմունքի այս վերջին հատվածը չափազանց է համարել և ջնջել։ Իսկ այս իրողությունն ավելի է մեծացնում դեռևս 1950-ական թթ. Վ. Հակոբյանի արտահայտած այն կասկածը, թե Աքայի և Տրիպոլիսի կրկին մահմեդականների ձեռքն անցնելու մտնրամասն նրկարագրությունների հեղինակը (կամ քաղագրողը) թերևս Պալիանենցն է²⁹։

Պակաս ուշագրավ չէ և Տաճարականների կարգի ջախջախման Պալիանենցի արձանագրումը և, հատկապես, նրա աղբյուրը։ Հայտնի է, որ 1118—1119 թթ. Երուսաղեմում ստեղծված և 1291 թ. Արևելքում ոտքի տակ հողը կորցրած ու հիմնականում Ֆրանսիա տեղափոխված այս ռազմավարական կազմակերպությունն անհաշիվ հարստությունների տեր էր դարձել։ Բացի դրանից, Ֆիլիպ IV Գեղեցիկի (1285—1314) և պապերի պայքարում սրանք պապության եռանդուն կողմնակիցներն էին, ուստի թագավորը, որ 1307 թ. հոկտեմբերի 13-ին բանտարկել տվեց Ֆրանսիայում գտնվող բոլոր տաճարականներին ու նրանց կարգապետին (Magister), 1309 թ. մարտին Կղեմես V պապին (1305—1314) ընկճելուց, նրա արքունիքը Ավինիոն տեղափոխելուց և տաճարականներին վերագրված հերետիկոսության մեղքը փառիզի համալսարանի կողմից հաստատել տալուց հետո, 1310 թ. մայիսին նրանց բոլորին բարձրացրեց ինկվիզիցիայի խաբույկների վրա։ Իսկ մյուս երկրներում ապրող տաճարականները դեռևս վտանգ էին ներկայացնում և Ֆիլիպ Գեղեցիկի կամակատար դարձած պապն այս անգամ ստիպված եղավ 1312 թ. հատուկ կոնդակով բանադրել ու հերետիկոս հայտարարել ումբոզ կաղմակերպությունը, որին էլ հետևեց նրա խապառ բնաջնջումը³⁰։ Այս ողբերգական պատմության ջնջված հաղորդումը Պալիանենցն անկասկած վերցրել է հիշյալ կոնդակից. «Որպէս պատմի ի ճառն Գլէմէնդոսի պապոյն Ե» (1578, էջ 244). այսպես է ավարտվում տեղեկությունը։

Այս պապի հաջորդ անվանակցի՝ Կղեմես VI-ի (1342—1352) մի ճառ-կոնդակ էլ Պալիանենցն օգտագործել է Հոնորիոս Դ պապի (1285—1287) վար-

²⁸ Այս բառը նիշտ է ընթերցված, բայց թարգմանչի օգտագործած շատ բառերի նման տա ևս բառարաններում արձանագրված չէ։

²⁹ Տե՛ս ՄԺ, Բ, էջ 174, 91, 92։

³⁰ Այս դեպքերի մասին տե՛ս Советская историческая энциклопедия. Т. 7, М., 1965, с. 425, т. 14, М., 1973, с. 100—101. Энциклопедический словарь, Изд. Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XXXIIA, СПб., 1901, с. 861—862.

քի վերջում, ուր մինչ այդ իշխած քահանայապետների քանակի հանրագումարն է անում. «Թիւք և համարք վերագրելոց քահանայապետացս Հռոմայ են ամհնաւն միահասմուռ ՃՂԳ (193) մինչև ցայս վայր... Այլ պարսն Գլմէնտոս Զ (6)-երորդն ի քարոզն իւր որ և ի խորհուրդ ևս և վասն Յոբելեանն ամին և Քաուլթեանն է արարեալ, ԲՃ և Զ (206) պապ ասէ ինքեամբ...» (1578, էջ 223)։

Մինչև այժմ ներկայացված հավելումների մեծ մասը վերաբերում էր եկեղեցական պատմության բաժնին, բայց դա չի նշանակում, թե թարգմանիչը միայն այստեղ է լրացումների կարիք զգացել։ Քաղաքական պատմության բաժնում ևս, երուսաղեմի առման հատվածից բացի, կան ընդարձակ և նշանակալից մուծումներ, որոնք արտացոլում են ոչ միայն Պալիստինացի ճաշակը, այլև, երբեմն, նաև ժամանակի պապականության քաղաքական մտայնությունները։

Այսպես. Առնուֆոսից (888—889. ըստ Մարտինոսի՝ 900—902) հետո և Լյուդովիկոս III-ից (900—911. ըստ Մարտինոսի՝ 902—908) առաջ հայերենն չունի լատիններենում բացակայող (հմմտ. Mart. 463—464) մի խոշոր կտոր, որի լուսանցում գրված խորագիրն է. «Ազգաթիւ թագաւորացն Ֆրանցիոյ» (1578, էջ 186)։ Այստեղ առանց թվականների և մանրամասների տրված է Կապետինգների արքայատոհմի ծագումնաբանությունը. սկսվում է «Աստ կամիմք յիշումն առնել թագաւորացն Ֆրանցիոյ, որք թագաւորեցին ի Փարիզն» մուտքով, ապա բացատրում է, որ Կառլոս Մեծի ցեղին պատկանող Առնուֆոսից հետո կայսրության պատիվը նրանցից վերցվել և գերմանացիներին է տրվել, որովհետև առաջինները դադարել են ծառայել պապերին։ Դրանից հետո իբրև Ֆրանսիայի առաջին թագավոր ներկայացնում է «յազգէն Գառլ մայնին Ուկն Գաբուց» — Հուգո Կապետին (987—996)։ Այնուհետև, հիմնականում Աստվածաշնչի ոճով, թվարկում է հաջորդներին. «Ուկն ծնաւ ՂԼոպէրտն» և այլն. մի փոքր ծավալվում է Ֆիլիպ II Ավգուստի (1180—1223) և Ֆիլիպ IV Գեղեցիկի մասին։

Կարևոր է Լյուդովիկոս VIII-ին (1223—1226) վերաբերող «սղարեաց և էառ զվինիօնն քաղաք» հաղորդմանը հետևող մասը, ուր այժմ երևում է երկու քերական-ընթաց տող. առաջինի վրա ավելի լայն և ձգված տառերով Պալիստինեցը ի նորոգրել է. «Ի յորում է գուրդն Հռոմայ», իսկ ընթաց մասից ղըժվարությունը կարդացվում է. «||| և յայսմ ժամանակի ||| և զգիրքս իսկ թարգմանեմ ||| և գրեմ»³¹։ Իսկ հավելմանս վերջը լիովին լուծում է իր մուծող-հեղինակի հարցը. այստեղ ասվում է, որ Կառլոս IV-ով (1322—1328) վերջանում է Հուգոյի տոհմը (Կապետինգների արքայատոհմը — Յ. Վ.)՝ «զի էառ զթագաւորութիւնն որդին եղբօրն Ֆիլիպի Գեղեցկին, որ կոչեն Ֆիլիպ տը Վալուդ, որ և ունի իսկ և թագաւորէ, թէպէտ և բազում վշտօք, կոռօք և շարերով կոյ, բայց ունի մինչև ցայժմ, որ է թվականին Քրիստոսի ՌԳԾ և Մ (1350)։ Սա է յոյժ ատեցեալ յիւր աշխարհէն և աւերիչ և ագաճ»։ Ֆիլիպ VI Վալուան (1328—1350) մահացել է օգոստոսի 22-ին, ուրեմն այս տողերը, որ գրվում էին 1350 թ. առաջին կեսին, անկասկած պատկանում են Պալիստինեցի գրչին։ Պետք է նաև նկատել, որ թարգմանչի նման մուծումը կարող էր առաջանալ միայն ավինիոնյան գերություն պայմաններում՝ երբ պապականությունն ավելի շատ զգում էր Ֆրանսիայի թագավորների ներկայությունն ու զորությունը, քան՝ պաշտոնապես Հռոմի անունը կրող գերմանացի կայսրերի։

Հայերենի լատինական հավելումներ են նաև ժամանակակից Կղեմես VI պապի և Կառլոս IV կայսեր (1347—1378) Պալիստինեցի գրած վարքերը, բայց այստեղ մեր թարգմանիչը նույն դերում է, ինչ Մարտինոսի գործի բոլոր եվրոպացի շարունակողները, ուստի և այս հարցն արժանի է առանձին քննություն³²։

31 Թարգմանչի այսպիսի արտահայտություններ տե՛ս և ՄԺ, Բ, էջ 178—179

32 Պալիստինեցի հետո ինչ-որ մեկը պապերի բաժինը շարունակել է մինչև 1389 թ., բայց սա վերաբերում է հայ իրականության մեջ Մարտինոսի երկի հետագա նակատագրի հարցին։

Ինքնագրի թերթերի առաջին երեսների (կենտ էջերի) վրա գրված եկեղեցական պատմության բաժինը նրան զուգահեռ ընթացող և թերթերի երկրորդ երեսները (զույգ էջերը) զբաղեցնող քաղաքական պատմության բաժնից ավելի ծավալուն է, ուստի, Կառլոս IV-ի՝ իր գրած կենսագրությունից հետո՝ հնարավոր լրացումների համար կես էջ չգրված թողնելով (1578, էջ 256), ազատ մնալիք զույգ էջերի վրա Պալիանենցը զետեղել է լատինական իրականությունից բխող երկու բնագիր (1578, էջ 258, 260, 262), ապա՝ իր հայտնի «Իշխանութիւնք և թագաւորութիւնք Հայոց» գործը (1578, էջ 264, 266, 268)։ Բնագրերի այսպիսի դասավորությունը Պալիանենցին հիշյալ լատինական բնագրերի մոծող համարելու համար կասկած չի թողնում, բայց դա ավելի ցայտուն երևում է հենց այդ նույն բնագրերի քննությունից։

Առաջինը (խորագիրն է՝ «Կայսերք և թագաւորք քրիստոնէայք յամենայն աշխարհս»), Աստվածածնի անվավեր վարքի նման, ունի երկու տարբերակ՝ սխալ և ճիշտ։ Խաչածն գծերով շնչված անավարտ տարբերակի վերևում գրված է. «Շրջէ և գտնեալ այլ՝ ըղորդ գրած» (1578, էջ 258)։ Սկսվում է այսպես. «Աստուծոյ և ինքնակալք, որ և կայսերք, նալ և քրիստոնէայք, որք են յերկրի» (1578, էջ 260)։ Առաջինը Հռոմի կամ «Ալամանաց» կայսրն է, որի ենթակալության տակ Ալամանիայում կա 8 թագավոր։ Երկրորդը Կոստանդնուպոլսի կայսրն է, որ «հնազանդ իւր» ունի 5 թագավոր. երկրորդ տարբերակը տալիս է նաև դրանց անունները (առաջինը չունի)։ Տրապիզոնի, «Պուլկարիոյ, Վլախնոյն, Հոռուսաց, Սըրպաց»։ Այստեղ ավելացնում է նաև՝ «է և թագաւորն Վրացն Հոռոմ դուռնութեամբ, բայց հնազանդի Թուրքին ակամայ»։ Հասկունսլի է, որ հնազանդության հիմնական պայմանը համարվում է դավանանքը։

Այսուհետև հաջորդում են թագավորությունների անվանումները՝ Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի և այլն՝ յուրաքանչյուր անուն մի տողում, թվով 26։ Այս պարզ թվարկումն ուղեկցվում է Պալիանենցի երբեմնակի մեկնություններով. Սարգիսիայի, Սիցիլիայի, Կիպրոսի և Անգլիայի դիմաց ծանոթագրում է. «Կղզի է», Սիցիլիայի մասին՝ լրացնում. «Սա և կոչի թագաւոր Աբուլիոյ», նրա և Կիպրոսի մասին՝ ավելացնում. «Սուրա երկոքեանս զրեն և ասին թագաւոր Երուսաղէմայ, բայց ոչ որն ունի», Երուսաղէմի մասին՝ «զերեալ կայ»։ Ուշագրավ է և Հայոց թագավորությանը վերաբերող բացատրությունը. «Կու բառնի. աւաղ է յոյժ»³⁴։ Անվանացանկին հետևում են նոր պարզաբանումներ. ոմանք թագ են կրում և թագավոր կոչվում, բայց ըստ (կաթոլիկ—Յ. Վ.) «եկեղեցւոյն չեն թագեալք», Երուսաղէմի, Ֆրանսիայի, Անգլիայի, Սիցիլիայի և Հայոց թագավորները սովորաբար պատշաճապէս օրհնվում են պապի կողմից, բայց «այսօր բազումք օծել տան զինքսնս տնխորհրդաբար», ապա՝ Երուսաղէմի, Սիցիլիայի, Արագոնիայի և Սարդինիայի թագավորները պապի ճորտն են և երգում են տալիս նրան. կան և թագ կամ կիսաթագ կրող դուկեր, բրինցներ, մարկիզներ և այլն։

Երկու անգամ Պալիանենցի ծանոթությունների մեջ արտացոլված է 1323 թ. Սարդինիա կղզու՝ Արագոնիային միացվելու իրողությունը³⁵. «Զոր ալժմ Արակօնիոյն ունի զերկուսն» և «Երկուսս մի թագաւորութիւն է»։ Նշանակում է, որ թագավորությունների այս ցանկը կաղմված է եղել այդ թվականից շատ ավելի առաջ։ Ըստ կաթոլիկ եկեղեցու շրջագրվածների մասին մեր հեղինակն ասում է. «Ի սոսա պապն գաւառակալ գրէ և ոչ թագաւոր»։ Ուրեմն, պետք է մատահ լինել, որ սա պապական գրասենյակի աւօրյա գործածությունների մի փաստաթուղթ էր, որի հիման վրա կաղմվում էին քրիստոնյա

³³ Հմմտ. ՄԺ, Բ, էջ 196—206։

³⁴ Սա գրվում էր 1351 թ., իսկ 1380 թ. Ավետիս Օգոստինն ավելացրել է. «Քանզի զերեալ իսկ կայ մինչև ցայժմ ի յնդպտոս. և այսպէս բարձաւ թագաւորութիւնն յազգէս հայոց»։

³⁵ Տե՛ս C. J. Bishko. The Spanish and Portuguese Reconquest. 1095—1492 (A History of the Crusades, K. M. Setton general Editor, Vol. III. The Fourteenth and Fifteenth Centuries. Ed. by H. W. Hazard, Madison, 1975, pp. 396—456), p. 447.

երկրների կառավարողներին ուղղված դրույթունները՝ կոնդակները. այն ուրվագծում է քրիստոնյա պետութիւնների հետ պապական արքունիքի հարաբերութիւնները: Իսկ որ Պալիանենցն այդ գրասենյակից Կիլիկյան Հայաստան ուղարկված փաստաթղթերից շատերի կազմման ամենագործուն մասնակիցն է եղել, վաղուց հայտնի իրողութիւնն է³⁶:

Երկրորդ բնագիրը, որի խորագիրն է «Պատերազմողն հմտագոյն» (1578, էջ 262), ներկայացնում է «քաջ և ամենայն զօրութեամբ զարդարեալ... ամենայն խասիաթովք լի... հմուտ և մղող պատեյազմաց և կարգաւորիչ մարտից, արուեստաւոր կոտորղք, ճանաչողք հեծելութեանց, ի ժամուսկսողք և ի պատշաճի խոյս տուողք, գմիրք և ըմբշամարտիկ» այն ինը այրերին, որոնցից երեքը «կռապաշտ» էին, երեքը հրեա, երեքը՝ քրիստոնյա: Կռապաշտներն են «Հէքդոր որդի Բրիամոսի, Ալէսանտր Մակեդոնացի, Ճուլիոս Յէզար», հրեաները՝ «Յեսու Նաւեան, Դաւիթ Թադաւոր, Յուդա Մակաբէ», իսկ քրիստոնյաները՝ «Գաուդոս մայնն, Արզուզէոս Թադաւոր, Կոստոֆրէտոս տը Պայլոնն»: Յուրաքանչիւրի անվան դիմաց տրված է մի համառոտ տեղեկանք. իշխելու տեղութիւն, ժամանակն ըստ Քրիստոսի (ծննդից առաջ և հետո) և ըստ աշխարհի արարչագործութեան: Երբեմն կան նաև նրանց նշանավոր գործերի մասին ակնարկող բառեր ու արտահայտութիւններ:

Պետք է ենթադրել, որ Պալիանենցն իր կարգացած գրքերից մեկում հանդիպել է այս անունների ստակական մի թվարկման, դրանք լրացրել այլ աղբյուրներից քաղած տեղեկութիւններով և կազմել իր ցանկը: Այսպես մտածելու համար հիմք է տալիս այն փաստը, որ հետագա հնարավոր լրացումների համար Գոտֆրիդ Բուլոնացու անվան դիմաց երեք տող է թողել, իսկ «Արզուզէոս» Թադավորի մասին որևէ արժանահավատ աղբյուր չի գտել և անվան դիմաց թողել է չգրված հինգ տող: Սա այն նշանավոր առասպելական Արթուր կամ Արթուզ (Arthuseus) Թադավորն է, որն իբր VI դարում Անգլիան քրիստոնյա է դարձրել, ապա՝ առանձնացել ինչ-որ կողմում կամ հոգին փոխարկվել է աղափնու և անհրաժեշտ պահին կարող է վերադառնալ մարդկանց մոտ ու շարունակել իր քաջագործութիւնները: Սրա և իր ստեղծած 12 ասպետների առասպելական կարգի մասին Եվրոպայում ողջ միջնադարի ընթացքում հնարվել է «Կլոր սեղան» ընդհանուր անունով զրույցների մի երկար շարք³⁷: Իսկ այսպիսի «պատերազմողի» մասին, բնականաբար, արժանահավատ աղբյուր և որոշակի թվականներ գտնելը դուրսին չէր:

Այս ամենի ուժով բացատրվում և որոշակի իմաստ է ստանում Պալիանենցի առաջաբանի հետևյալ նախադասութիւնը. «Զթարքմանեալս ի յոմանս տեղիս ի մի հեղեալ և կարգաւորեսոյ, սրբազրելով գրել սկսանիմ ըստ կարգի»³⁸: Հասկանալի է, որ, թեկուզ տարբեր տեղերում և ժամանակներում, սոսկ Մարտինոսի գործը թարգմանած լինելու դեպքում ի մի դնելու և կարգավորելու հարց չէր կարող առաջանալ, որովհետև այն իր հեղինակի ձեռքով արդեն իսկ կարգավորված էր: Ուստի 1348 թ. նախորդած աշխատանքի եղանակը մենք պատկերացնում ենք հետևյալ ձևով. ծայրից ծայր՝ ինչպես որ կար, թարգմանել է Մարտինոսի աշխատութիւնը, բայց պարբերաբար հանդիպել է անունների ու փաստերի, որոնց մասին ուրիշ գրքերում կարդացած է եղել այլ բան ասող կամ ավելի ընդարձակ շարադրանքներ. այնուհետև հատուկ գրառումներով կամ հիշողութիւն մեջ պահելով Պալիանենցը հետո գտել և թարգմանել է դրանք, բայց ընդհանուր շարադրանքի մեջ անմիջապես մոռնելն անհնար է եղել և առանձին թերթերի ու թերթիկների վրա մնացած այդ քաղվածքներն է, որ հետո ի մի է բերել, կրկին և ավելի ճշգրիտ որոշել այն տեղը, ուր պետք է դրվի հավելումը («կարգաւորեալ» բառը բնորոշում է հենց այս աշխատանքը)

36 Տե՛ս Մ. Զամչյան. Նշվ. աշխ., էջ 340. հմտ. Մ. Օրմանյան. Աղգապատում... հ. Բ, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 1854—1865, 1889—1890 և այլն:

37 Տե՛ս Энциклопедический словарь. Изд. Ф. А. Брокгауз, А. И. Ефрон. Т. II, СПб., 1890, с. 208—209.

38 ՄՄ, ձեռ. № 2038, էջ 1բ:

և միայն դրանից հետո սկսել «ըստ կարգի» արտագրել ու սրբագրել: Վերջինիս ընթացքում, հավանաբար, կանխատեսված մուծումների մի մասը դուրս է մնացել:

Ամփոփենք. ներկայացվածը բավական է, որպեսզի լիովին հավատանք Պալիանենցի մի հաղորդման իսկությունը. «Քանզի եմ գուրզ ի գուրզս Հոռմայ. խուզմամբ յածեալ ընդ ամենայն տեղիս և քննեալ շօշափմամբ զամենայն զրեանս, ևս և զկարտինալացն, քահանայապետականսն...»³⁹: Այսինքն՝ պետք է ընդունենք, որ 12 տարուց ավելի Ալինիոնում ապրելու և Եվրոպայում շրջելու ընթացքում մեր հեղինակը շատ է կարդացել և, որ ավելի կարևոր է, աշխատել է ստացած գիտելիքները Մարտինոսի «Ժամանակագրության» թարգմանություն մեջ մուծելով հնարավորին չափ ավելի շատ կաթոլիկ նյութ դարձնել հայ ընթերցողի սեփականությունը: Անկասկած, Եվրոպա մեկնելուց առաջ (գուցե նաև հետո) նա պետք է տեղյակ լիներ Քոնստանդնուպոլսի մանուկների մասին և իմանար, որ դրանց շարքում պատմագրական գործ չկա: Մարտինոսի երկը ժամանակի պապական արքունիքի համար տիեզերական (ժամանակի ըմբռնմամբ) պատմության ամենահեղինակավոր ու հանձնարարելի դասագիրքն էր, բայց նրա հեղինակի համար կաթոլիկությունն ինքնին հասկանալի երևույթ էր և դրա քարոզն իր զրքով չպետք է արվեր. այսինքն՝ սա քաղաքական և եկեղեցական պատմությունների մասին ամենահամառոտ տեղեկատու էր: Իսկ Պալիանենցի թարգմանության հիմնական նպատակը կաթոլիկ եկեղեցու պատմական ավանդույթը հայ իրականության մեջ մուծելն էր, որովհետև թեև և՛ բուն Հայաստանում, և՛ Կիլիկիայում կաթոլիկացած համայնքները սակավամարդ էին, բայց նրա խորին համոզմամբ ողջ հայությունն ի վերջո պետք է դարձնեցեաց մայր» Հռոմի գիրկը և երկրպագեր նրա պապին: Իսկ քանի որ կաթոլիկ եկեղեցու սրբերի, հայրերի ու պապերի անունների գրեթե անկենդան և ուրվագծային շարադրանքով այդ եկեղեցու պատմական ավանդույթը հայ իրականության մեջ արմատավորվել չէր կարող, ուստի Պալիանենցը Մարտինոսի աղբյուրների և նրա հաղորդումների հետքերով գնալով, հաճախ օգտագործելով նրա իսկ աղբյուրները, ավելի բովանդակալից, կենդանի և հետաքրքրաշարժ է դարձրել իր թարգմանությունը:

Բնագրի և թարգմանության ծավալների հարաբերությունն ավելի առարկայորեն պատկերելու համար դիմենք թվերին. լատիներեն քննական հրատարակության բնագիրը մոտ 11 մամուլ է, իսկ Պալիանենցի թարգմանությունը՝ 23—24: Հայկական մուծումների հրատարակված կեսը⁴⁰ 1,2 մամուլ է: Որքան էլ աճի մի մասը պատճառաբանենք աղատ թարգմանությամբ կամ հայ իրականությանը խորթ երևույթների առատ մեկնություններով, դարձյալ լատինական հավելումների բաժինը հսկայական է: Ուստի, թեև հայկականներն արդեն հիմք դառնում էին⁴¹, բայց լատինականներն ավելի ևս ամրապնդում են այն համոզմունքը, որ Մարտինոսի երկի հայերեն թարգմանությունն այսուհետև պետք է անվանել «Մարտինոս Օպավիացու և Ներսես Պալիանենցի «Գալազանագիրք Հռոմայ և Հայոց»:

39 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենագրանին Մխիթարեանց ի Վենետիկ». Տ. Գ. Մաշտոց—Գիրք ձեռնագրութեանց, Յօրինէցին Տ. Բ. Սարգիսեան և Տ. Գ. Սարգսեան, Վենետիկ, 1966, էջ 358:

40 Տե՛ս ՄԺ, Բ, Աջ 176—189 և 196—206:

41 Տեղական հավելումների ուժով թարգմանչին հեղինակալից համարելու օրինակներ տե՛ս Օ. Ա. В а н и ш г е й н. Западноевропейская средневековая историография. М.—Л., 1964, с. 40; Д. С. Лихачев. Текстология. На материале русской литературы X—XVII вв. М.—Л., 1962, с. 419—420; В. Н. Матузова. Английские средневековые источники IX—XIII вв. Тексты, перевод, комментарий. М., 1979, с. 14—15.

ИЗВЛЕЧЕННЫЕ ИЗ ЛАТИНСКИХ ИСТОЧНИКОВ ДОБАВЛЕНИЯ
АРМЯНСКОГО ПЕРЕВОДА «ХРОНИКИ» МАРТИНА ОППАВСКОГО

Ю. А. ВАРДАНЯН

(Резюме)

«Хроника пап и императоров» чешского доминиканца и официального историографа папской курии Мартина Оппавского (ум. в 1278 г.)—сухой и схематичный учебник, состоящий из: а) истории Римской республики, б) церковной истории (биографий римских пап) и в) светской истории (биографий императоров). В глазах католических иерархов она стала образцовым историческим произведением и в XIV—XVI веках являлась самым авторитетным сводом исторических сведений для большинства образованных европейцев. Эта компилятивная хроника сохранилась в бесчисленном количестве рукописей и в двух старопечатных изданиях. Она положила начало новому жанру хроник, который по имени автора прототипа получил название «Мартиновских хроник». В XIV—XV вв. произведение Мартина многократно переделывали, продолжали, дополняли и переводили на итальянский, чешский, немецкий, французский, испанский и греческий языки. Ее армянский перевод, сделанный Нерсесом Палианенцем в 1348—1351 гг. в Авиньоне, в историографическом отношении занимает важнейшее место среди обширной переводной литературы армянских католиков-униатов. Добавления Палианенца, относящиеся к истории Киликийского Армянского государства, в его переводе «Хроники» известны в арменоведении с конца XVIII в. (начиная с М. Чамчяна). При изучении автографа этого перевода (рук. № 1578 библиотеки армянской конгрегации Мхитаристов Венеции), особенно отредактированных его мест, и их сравнении с латинским подлинником нам удалось выяснить, что Палианец дополнил и обогатил свой перевод выдержками из различных латиноязычных источников (трудов Евсевия Кесарийского, Иосифа Флавия, Иеронима Стридонского, Гуго Флерского, сборника канонов соборов латинской церкви и папских постановлений „Liber Decretalium“, папских булл и прочих хроник). Тем самым он стремился предоставить армянскому читателю как можно больше материалов и внедрить в армянскую действительность исторические традиции Европы и папства. Благодаря латинским и армянским добавлениям объем перевода Палианенца по сравнению с оригиналом возрос вдвое. Ввиду этого армянский перевод «Хроники» Мартина впредь следует именовать «Римской и Армянской Хроникой Мартина Оппавского и Нерсеса Палианенца».